

ԱՎԱՆԱՏԵՍԸ ՄԱԿԵԴՈՆԱԿԱՆ ՁԵՐԺՄԱՆ ՄԱՍԻՆ *)

Բոլոր լրագրերի սիւնեակներն այժմ ողողուած են՝ մակեդոնական դործերի մասին տեղեկութիւններով: Մերթ հաղորդում են այս կամ այն հրոսակախմբի ոչնչացման մասին, մերթ հրոսակներ նորանոր երեւոյւ մասին: Յիշուում են անձանսթ վայրեր, ամենքին անյայտ անուններ: Ներկայ յօդուածում ես կամենում եմ պատմել մակեդոնական տպրատամութեան մի քանի դէպքերի և այդ դժբախտ երկրում տեղի ունեցող պարտիզանական կռիւ ընթացքի մասին, որքան այդ աջողուել է ինձ խմանալ արժանահաւատ անձերից:

Թիւրքերը կենտրոնացրել են բուլղարական սահմանի վրայ մեծ զինուորական ուժեր: Դուքնիցայի, Կիւստենդիլի, Սամակովի դիմաց զինուած գտնուում են մօտ քառասուն հազար զինուոր: Լեոնային Ջումայան, մի փոքրիկ քաղաք՝ բուլղարական սահմանից ընդամենը հինգ վերստ հեռու, ծառայում է իբրեւ յենակէտ թիւրքական տասնազարեան զօրախմբի: Մակեդոնիայում ընդամենը մինչև երեքհարիւր հազար թիւրքական զօրք կայ զանազան տեսակի, որոնք գործում են առանց որոշ ծրագրի, յաճախ սոված և փախչելու հակումով, որովհետև պարտիզանական (ապստատակային) կռիւր դժուար է, իսկ ոռճիկ երկար ժամանակից ի վեր չէ տրուում: Հէնց Մակեդոնիայում կադմակերպուող՝ ապստամբների խմբերի մի նշանաւոր մասը զինուած է մաուզերեան հրացաններով, որոնք գնուած են թիւրքական զինուորներից: Դեզերտիրը (փախստական զինուորը) ծախում է իր հրացանը և դառնում թափառաշրջիկ:

Վերը յիշուած թիւրքական ուժի դէմ գործում է ապստամ-

*) „Русскія Вѣдомости“, № 260.

բական հրոսակախմբերի մի մեծ քանակութիւն, սակայն որոշել նրանց թւական կազմն ընդհանուր գումարով—գծուար թէ կարելի լինի Իրանը զօրավարները, որոնք ղեկավարում են ապստամբութիւնը, իրանց ասպատակների թիւը որոշում են միայն մօտաւորապէս, քանից մինչև երեսուն հազար մարդ:

Ամենից առաջ հարց է ծագում, թէ ինչ կերպով են քան կամ երեսուն հազար հրոսակներ գործ տեսնում մի երկրում, որ հեղեղուած է թշնամու ահագին զօրաբաժնով: Ինչո՞ւն է կայանում դրանց առաւելութիւնը վերջիններից: Եւ ո՞վքեր են այդ քաջերը, որոնք սիրտ են արել անհաւասար կռւի մտնել: Կը պատասխանեմ՝ առաջնորդուելով միայն նրանով, ինչ որ ես ինքս եմ տեսել կամ ինչ որ լսել եմ տեղի ունեցող անցքերի մասնակիցներից:

Անպտեմբերի 7-ին դառնուելով Օսոգովեան լեռներում՝ ես տեսայ մի խումբ, որ պատրաստուած էր մտնել Մակեդոնիա, և բաւական զինուած մարդիկ, որոնք վերադառնում էին այնտեղից: «Բայց,—կ'ասէ ընթերցողը,—սահմանով անցնելը վճարուած է ներկայացնում, որովհետեւ այն պահպանում են թիւրքերը: Ել ինչպէս է որ ապստամբները յետ են դառնում: Պատասխանը պարզ է. գիշերներն արշաւանքներ կատարել թըշնամու զօրքերի մէջ, մազլյելով համարեա անառիկ դարաւանդներով, և ժամանակ առժամանակ մասնակիցել անհաւասար մարտին՝ կարելի է միայն մի քանի օր իրար վրայ, երբեմն մի քանի շաբաթ: Ապա վրայ են հասնում արտասովոր յոգնածութիւն ու սովից ուժաթափութիւն: Մակեդոնիայի քրիստոնեայ ազգաբնակութիւնն իր ուսեստի պաշարից բաժին է հանում իր պաշտպաններին, բայց որովհետեւ նրանց հետ ունեցած յարաբերութիւնը պէտք է խիստ գաղտնի պահուի, որպէսզի քաղաքացիական և զինուորական բազմաթիւ իշխանութիւններն այդ չը նկատեն, ուստի ապստամբները երբեմն հարկադրուած են լինում մի քանի օր իրար վրայ առանց կերակուր մնալ:

Խիզախ արշաւանք կատարելով, երկու-երեք ճակատամարտ տալով, սաստիկ քաղցելով և իրանց փամփուշտները դատարկելով՝ ապստամբներն շտապում են Մակեդոնիա, որպէսզի հանգստանան, քնից կշտանան, իրանց ղէնք ու զրանք կարգի գցեն, և ապա նորից են մտնում թշուառ երկիրը փոքր խմբերով: Թիւրքական պահակների մօտով ստիպուած են լինում երկար շարքով անցնել: Բայց ֆրոնտով կամ զօրասիւներով անցնել անհնարին է: Ահա թէ ինչու առանձին խմբերը մեծ չեն: Գիշերային անցքերի ժամանակ, երբ մարդիկ առաջ են

չարժուում շարան-շարան, նրանց միջի տարածութիւնը մի սա-
 ժենից պակաս չէ կարող լինել: Հետևապէս այդպիսի հրոսակա-
 խումբը ձգուում է մի ամբողջ վերատ, որ շատ դժուարացնում է
 հրամանատուութիւնը (ROMАНОВАНІЕ): Իւրաքանչիւր զինուոր
 հազած է «ցարվուլ» (փափուկ տակ ունեցող ոտնաման), որոն-
 ցով կարելի է գնալ առանց աղմուկ անելու: Դարաւանդներով
 անցնելու ժամանակ այդ ոտնամանին ամրացւում է երկաթի
 կտոր՝ երեք, երբեմն չորս մեխերով, որի շնորհիւ անհնարին
 անցքերը դառնում են հնարաւոր: Անդրավարտիքն ու բաճկո-
 նակները կարուած են տեղական դիմացկուն մահուդից (չայկա-
 ներից): Շինել՝ (վերարկու) ունեն ոչ ամենքը: Փամփուշտները
 խաչաձև դրասանգների պէս քաշ են արուած կրծքին և մի քա-
 նի շարք էլ գօտկատեղին: Ձինման համար դրանք կազմում են
 անհրաժեշտութիւն, և իւրաքանչիւր հոգուն տրւում է 250-ից
 մինչև 350 հատ: Սուր ու սուին պատահում են ոչ յաճախ,
 բայց դրա տեղ հրոսակը չի բաժանւում մանիխերեան հրացա-
 նից, որ սովորաբար կարճացրուած է լինում, հեծելազօրային
 հրացանի տեսակը, մօտ 95 սանտիմետր երկարութեամբ: Տես-
 քով դա—մի մանկական խաղալիք է, բայց խիում է գերա-
 վանց և շատ յարմար է արշաւանքի ժամանակ: Հրոսակի զխա-
 ւոր յոյսը—ոռումբերն են: Նրանցից երկու հատ նա պահում է
 իր քսակում և նա նրանցով ազատուած կը լինի վճռական րոպէին.
 եթէ որ հարիւր մարդուց բաղկացած մի խումբ աջողութեամբ
 մարտնչում է երկու հազար թիւրքի հետ, այդ նախ՝ այն պատ-
 ճառով է, որ վերջինները հարկադրուած են լինում թշնամինե-
 րի վրայ յարձակում գործելու անմատչելի դիրքերում, իսկ
 երկրորդ, հէնց որ յարձակումն աջողութեամբ պսակուել է
 սպառնում, ապստամբների գրաւած բարձունքից թռչում են
 ոռումբեր, որոնց հետեանքը սաստիկ աւերիչ է և թիւրքերին
 սարսափի մէջ է գցում: Փոքր ոռումբերը նարնջի չափ են եր-
 կու վերջով տրամագծով. մեծերը—խորանարդաձև, չափւր մօտ
 երեք վերջով, քաշը վեց ֆունտ: Երբ հասնում է գիշերը, կռիւը
 հանդարտւում է: Հազարաւոր թիւրքերն իմանում են, որ ի-
 բանց մի բուն թշնամիներն սկսելու են նահանջ: Բոլորովին
 չըջապատել նրանց համարեա անկարելի է շնորհիւ լեռնաշղթա-
 ների ու խորխորատների: Միւս կողմից էլ իւրաքանչիւր հրո-
 սակ նահանջելիս բռնած է ձեռին ոռումբ և թանգ կը ծախէ իր
 կիանքը: Վերջապէս իւրաքանչիւր խումբ ունի մէկից մինչև
 հինգ էլեկտրական մարտկոց և ուժանակ, որը ծառայում է կա-
 մուրջներ թռցնելու և ականներ չինելու համար:

Լինում են բացառիկ դէպքեր, երբ հրոսակախումբը, որ

սովորաբար օգտուում է տեղացի փորձուած առաջնորդներին, անսպասելի կերպով հանդիպում է թիւրք խմբի թիւրքերի թւական առաւելութեան ժամանակ ևս նրանց յաղթութիւնն այդպիսի գէպքում անխուսափելի է:

Անպատեքների 7-ի դիչերն ինձ վիճակուեց ընթրել զօրավարների հետ միատեղ, թիւրքական պահականոցներից գնդակ հասնելու տարածութեան վրայ, մակեդոնական սահմանի մօտ, կիւստանդիլի չրճակայքում, և ես զարմանքով տեսայ մօտս կապիտան Պրոտոգերովին, որ այս տարուայ ապրիլին ծանր կերպով վիրաւորուել էր: Նրա ընդամենը վաթսուն մարդուց բաղկացած խումբը հանդիպել էր թիւրքերի և կուել նրանց հետ՝ ունենալով մէկ հոգու գէմ քսան թչնամփ: Հետեանքն այն էր եղել, որ խմբի երեք քառորդը կոտորուել էր. ինքը Պրոտոգերովին ստացել էր հրազէնից վէրքեր երկու ոտներին էլ և մի գնդակ էլ կրծքին: Վաթսունից կենդանի մնացած տասնհինգ խիզախների ձեռքով ազատուելով՝ նա սաստիկ տանջուել էր, տարուելով սար ու ձորերով, վերջապէս աճողութեամբ հասցրուել Մակեդոնիայից դուրս մի հիւանդանոց, առողջացրուել և նորից է վառուած անվնհրութեամբ ու միւս զօրավարների հետ մի շարքում կանգնած է ապստամբութեան գլուխը:

Ես տխրութեամբ էի նայում իմ սեղանակիցներին: Հրոսակախմբի աւանգարդն (առաջապահ զօրքն) արդէն ճանապարհ էր ընկնում: Մնացողները չուտափոյթ ամրացնում էին իրանց ոյժերն՝ շտապելով ժամանակին միանալ ընկերների հետ: Նրանցից որքան կը հաւաքուի հետեւալ ընթրիքին, — հարցնում էի ինքս ինձ: Բայց մարդու ճակատը պինդ է, և ձեր Մարկան, որ նստած էր զիմացս, վերջին խօսքերիս կենդանի մեկնութիւն էր. դրանից քսանուհինգ տարի առաջ հրազէնից ստացած վէրքերով, երկու որդի ունեցող, որոնցից մէկը կտոր-կտոր էր եղել այս տարուայ յունիսին ուժանակի պայթիւնի ժամանակ, իսկ միւսը հէնց այժմ էլ կուում է թիւրքերի գէմ, այդ Մարկան՝ մարմնացնում է իր մէջ Բալկանեան թերակղզու՝ անցեալ դարի վերջին քառորդի պատմութիւնը: Նա բարի է, համարեա ուրախ, բայց մի անգամ՝ ցոյց տալով ինձ աղետի տեղը, որի մօտ նա գտել էր միայն իր որդու դիակի փոքրիկ կտորներ, ծերուկը մի վայրկեան յուզմունք ցոյց տուաւ և դողացող ձայնով ասաց. «Երբ միւսին էլ կը սպանեն, այն ժամանակ ես ինքս կը գնամ»: Հասկանալի է, թէ ինչու նա այժմ չէ գնում. նրա տան չուրջն են խմբում զօրավարները, նա հարկաւոր է այստեղ, ուր դռնուում է բոլոր ձեռք առնելիք միջոցների հանգոյցը: Նրա «այն ժամանակ ես ինքս կը գնամ» խօսքերում պարունակուում էր և՛

մոայլ սպաճնայիք թիւրքերին, և՛ պարտքի համեատ դիտակցութիւնս Աֆֆեկտացիայի ստուեր էլ չը կար. այդտեղ խօսում էր պատմական և հոգեբանական տրամաբանութիւնը:

Ճանապարհ գցելով նրանց, որոնք թշնամիներին ընդառաջ էին շտապում, ևս հէնց նոյն գիշերը հանդիպեցի մի մեծաքանակ խմբի, որ գնում էր հակառակ ուղղութեամբ: Դա Չերնոպեկ զօրավարի հրամանատարութեամբ կարճ և խիզախ արշաւանք կատարած մարդիկն էին: Ահա նրանց հաշուետւութիւնը— սղուած, ծառայութեան ցուցակի պէս ամբողջ:

«Օդոստոսի 30-ին մենք՝ թւով երկուհարիւր իննսուն մարդ՝ մտանք Մակեդոնիա, մեր մէջ կային տաս ուսուցիչ, եօթ ուսանող, մակեդոնացի մի քահանայ Կուկուշից, կապիտան Տրեներ, պահեստի պոզպորուչեկ Ատցովը: Նրբ թիւրքերը խշխշոց են լսում, նրանք գիշերային մոայլի մէջ հրացանաձգութիւն են սկսում: Մեզանից մի քանիսը պատասխանում են, միւսներն առանց կանգ առնելու անցնում են սահմանից: Վերջանում է նրանով, որ թիւրքական զանազան պահականոցներից հրացանաձգութիւն է սկսում, և մենք արդէն հեռու ենք վտանգից, իսկ թշնամիները դեռ էլի գցում են՝ խմբովին հրացանաձգութեամբ իրար պատասխանելով և չը վստահանալով միմեի մէջ քննել բանի զրութիւնը: Բայցի այն, որ իւրաքանչիւրն ունէր 350 փամբուշտ, երկու սումբ և մի կիլոգրամ մ ուժանակ թէթեկի արկղիկներում, մենք ունէինք էլի տասներկու ձիարեւ սումբեր, ուժանակ, էլեկտրական մարտիոցներ և մաւթիւններ: Հինգ օր մենք զօրախաղ էինք կատարում Մակեդոնիայում, գիշերը ճանապարհ գնալով, իսկ ցերեկը թափնուելով: Ճանապարհներս ուղղել էինք դէպի Ստրումիցի կապան:

Սեպտեմբերի 4-ին թափում էինք Կոչնէի չրջակայքում, բայց վեց ժանգարմ մեղ գտան: Մենք առաջարկեցինք նրանց անձնատուր բնել: Նրանք չը համաձայնեցին ու սկսեցին հրացան արձակել: Մենք պատասխանեցինք հրացանաձգութեամբ, չորսին սայանեցինք, իսկ երկուսին գերի վերցրինք: Նրանցից մինը յետոյ փախաւ:

Հասկանալով, որ հրացանաձգութիւնը մեղ վրայ կը պրաւէ թիւրք զօրքերի ուշադրութիւնը, մենք ամրացանք մի բլրի վրայ, իսկ միւս օրը հիանալի գիւրջ բռնեցինք մի ժայռոտ տարի վրայ: Առաւօտեան ժամը 11-ի մօտ մեղ մօտեցան մինչև երեքհազար թիւրք: Նրանք խմբերով արձակում էին հեռու իրփող մատուցերեան հրացաններ: Բայց մենք նստել էինք ժայռերի յետը՝ ամենախիղճ վտանգի անգամ չ'ենթարկուելով: Փամփուշտները թանգ գնահատելով, մեր հրոսակախումբը համարեա

չէր պատասխանում կրակին, և միայն երբ թչնամին գառնում էր աւելի համարձակ և փորձ էր անում մեղ վրայ յարձակում զործել, մենք նրան զիմաւորում էինք խմբական յաճախակի հրացանաձգութեամբ, նախօրօք թոյլ տալով բաւական՝ մօտ, որպէսզի դիւրին լինի կողելը: Ամենափոքր վտանդի գէպքում մենք վերեկից գցում էինք ուսմբեր, որից յետոյ թիւրքերն անպատճառ նահանջում էին, թէև փողերը շարունակում էին «յարձակում» հնչել: Ժայսերի յետևում թաղնուած և բացի զբրանից խորացնելով մեր խրամատները՝ մենք կուռւմ էինք մինչև երկիցիսան ժամի 7-ը, չը կորցնելով ոչ մի սպանուած կամ վիրաւորուած: Յիշելու արժանի է, որ թիւրքական գնդակներէից չը վնասուեց մինչևիսկ զրօշակը, որ ծածանում էր մեր վրայ «Աղաւթիւն կամ մահ!» մակադրութեամբ: Նրա մի կողմում նկարուած է առիւծ, իսկ միւսում—մակկեդոնուհի ազգային շորերով:

Երբ ակեց մթնել և յորդ անձրև եկաւ, մենք նահանջեցինք գէպի անտառը: Թիւրքերն այդ նախատեսել էին և դարան զործել: Մթութեան, մառախուղի ու անձրևի տակ մեր ընկերներէից չորսն սպանուեց և երկուսը վիրաւորուեց: Բայց դրա տեղ թչնամին էլ մեծ վնաս կրեց մեղանից և մինչև իսկ հէնց իրանց հրացանաձգութիւններէից՝ յաճախ իրանցներին ուրիշներէի տեղ զնկելով:

Կուից յետոյ մեր խմբի մի մասը հեռացաւ Մակեդոնիայի, իսկ միւսը Պետրոս Սամարջիեի և Կապիտան Տրենիի հրամանատարութեան տակ գեռ մնում է այնտեղ, օր-ուուր աւելի ենթարկուելով թիւրքական զօրքերի յարձակումներին: Մեր առկառկայի շնորհիւ թիւրքական զօրքերը վտանգաւոր չեն: Որքան նրանցից չատ, այնքան մեղ համար հեշտ է անսկզբ հրացան գցել խիտ զօրասիւնների վրայ: Թիւրքերը փչացած են կարգուկանոնի կողմից և յարձակում չեն զործում: Բայց մենք ուժասպառ ենք լինում յոգնածութիւնից և սովից, այնպէս որ հանդստութիւնն անհրաժեշտ է»:

Եւ առաջ բերի այստեղ այս պատմութիւնը, որն ստուգել եմ ինքս կողմնակի ճանապարհով հարցուփորձ անելով մի քանի մասնակիցների, որպէսզի յոյց տամ, թէ ինչ նշանակութիւն ունի աղատամբների լաւ դիրք ընտրելը, նրանց հիանալի զինուածքը և բարոյական գերազանցութիւնը թիւրքերից:

Եթէ Կապիտան Պրոտոզերովի խումբը ստիպուած է եղել ճակամարտի ենթարկուել անքարեպատին պայմաններում և կորցրել է 60 մարդուց 45-ն սպանուած ու վիրաւորուած, սակայն

միւս կողմից Չերնոպեևի հրոսակախումբը ղրկուել է միայն վեց մարդուց՝ կոտորելով հինգհարիւր թիւրքից աւելի:

Իսկ ինչ վերաբերում է զօրավար Կովաչևի հարիւրեակին, նա մարտնչել է Կրասնովի մօտ թշնամու մեծ ոյժերի հետ և այս օրերս վերադարձել է կատարեալ անվնաս: Սա— ֆակտ է, որ ստուգել եմ ինքս հարցուփորձի միջոցով հէնց իրանից զօրավարից և նրա ութ հրոսակներին: Ճիշտ է, Կովաչևի խումբում մի քանի մարդիկ մնչորուել կամ ետ են մնացել, բայց նրանք նոյնպէս ողջ-առողջ վերադառնում են արշաւանքից, թէև մի քիչ ուշացած:

Չերնոպեևի և Կովաչևի երկու խմբերն էլ դործում էին Մակեդոնիայում ընդամենը մի շարաթ սրանից առաջ: Նրանց զինակիցներին շատերը հաւաքւում են նոր արշաւանք սկսելու և իրանց օրինակով բուլղարական ազգաբնակութեանը հիաղք են պատճառում:

Ուսանողներն, ուսուցիչներն, աստիճանաւորներն, սպաներն, ուրիշ գործի մարդիկ, զիւղական աղքատ դասակարգը—այդ բոլորն իրանց միջից դեռ հազարաւոր կամաւորներ դուրս կը բերեն: Այնպիսի նկարներ, որոնք պատկերացնում են ժողովրդական հերոսներին, ինչպէս Վասիլիյ Լիսկին և Ստեֆան Կարաջան, պատահում են և՛ բուրժուազական տներում, և՛ բուլղարիայի խզճուկ խրճիթներում: Նրիտասարդութիւնը ձգտում է նմանուել այդ մարդկանց, մանաւանդ որ պայքարի շահերն առանձին դէպքերում, ինչպէս ընթերցողը տեսաւ, այժմ աւելի բարեկյառող է ապստամբների համար, քան էր Կարաջայի ժամանակ:

Ապստամբութիւնն ունի բաւական մեծ քանակութեամբ փող, կատարելագործուած զէնքեր և օժանդակութիւն է ստանում հազարաւոր էնտուզիաստներից: Կասկած չը կայ, որ զարնանն ապստամբութիւնը կը բռնկուի կրկնակի ուժով, եթէ Դուռը չը շտապէ մօցնել այնպիսի բեֆորմներ, որ կարող լինեն բաւարարութիւն տալ մակեդոնացի քրիստոնեաներին:

Ներկայ ժողովին, երբ ես վերջացնում եմ այս տողերը, Սոֆիայում ակզի է ունենում փառահեղ մանիֆեստացիա. քաղաքը զարդարուած է նի գրօշակներով, և տասնհազար մարդուց աւելի ամբոխը հաւաքուել է Սոբորնայա (մայր-եկեղեցու) հրապարակում: Նրա կենտրոնում մօտ յիսուն դրօշակ կայ այսպիսի մակազրութիւններով և համապատասխան նկարներով. «Թիւրքական զազանութիւնները», «Կրուչևի ուժակոծումը», Օդրինակօի հրդեհները», «Ազատութիւն կամ մահ», ժողովրդի մեծամասնութիւնը հասարակ դասակարգն է, բայց կան և մե-

ծառուէն կանայք: Երբ զանգահարութեամբ մայր-եկեղեցուց
 դուրս բերին սպանուած վոլոնտեորներին (կամաւոր զինուորներին)
 պատկերները, այն վոլոնտեորներին, որոնց համար հէնց նոր հո-
 գեհանգիստ էր կատարուել, հասարակութիւնը վերցրեց զը-
 խարկները, դրօշակները խոնարհեցրին պատկերներին վրայ, և
 պ. Միխայլովսկին՝ մակեդոնական կոմիտեի նախկին նախա-
 դահը ճառ ասաց՝ ապացուցելով, թէ խմբերով սպանութիւնների
 պատճառով, որ դորձադրում է Թիւրքիան, և որոնք ուղ-
 զուած են Մակեդոնիայի խաղաղ բնակիչներին դէմ, Բուլ-
 զարիան ստիպուած է սկսել պատերազմ, որն էապէս
 կը լինի պաշտպանողական, սրովհետեւ անհրաժեշտութիւ-
 նից է՝ ստիպուած դուրս գալ պաշտպանելու հարազատ
 եղբայրներին: Ապա ամբոխը դրօշակներով ու թաղման երա-
 ժըշտութեամբ ուղղուեց դէպի պալատը և բոպէապէս կանգ առնե-
 լուց յետոյ շարունակեց ճանապարհը դէպի Լիսկիի արձանը,
 ուր հայրենասիրական ճառեր արտասանուեցին: Պալատական
 դարպասներն անմիջապէս կողպուեցին. լսուեց թմբկահարու-
 թիւն և փողահարութիւն: Այստեղից ամբոխն անցաւ իտալական,
 անցլիական, ֆրանսիական զեսպանատների բնակած տների մօ-
 տով, և ուղում էր ուղղուել դէպի ուսսայ և Թիւրքաց զեսպա-
 նատները, բայց ոստիկանութիւնը և զօրքն արգելեցին:

Թարգմ. Ա. Ա.Թ.